

**Սաթենիկ Ավետիսյան
ՀՀԱԱ Մ.Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի**

ԱՐՔԱՅԻ ԿԱՄ ԱՍՏՎԱԾԱՄԱՐԴՈՒ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ ԼԱՌՆ ԽԵՉՈՅԱՆԻ «ԱՐՇԱԿ ԱՐՔԱ, ԴՐԱՍՏԱՄԱՏ ՆԵՐՔԻՆԻ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր. - աստվածամարդ, արքա, մելիք, արքյություն, աշխարհակարգ, աստվածային օրենք, դիցապատում, դյուցազնավեպ, նոխազ, խորհրդաբանություն:

Լառն Խեչոյանի արձակի այս շերտի մեկնությունը ոչ միայն գրական-գեղարվեստական խորքային քննություն է պահանջում, այլև պատմագիտական, մշակութաբանական, բանագիտական-առասպելաբանական բարդագույն խնդիրների հետազոտում և համադրում, որպեսզի կամ հիմնավորվի խեչոյանական պնդումը, թե արքան Աստվածամարդ է, կամ հերքվի՝ մնալով զուտ որպես գեղարվեստական հորինվածքի կերպավորման հնար կամ հեղինակային քմահաճույք: Արշակունի արքայատոհմի, մասնավորապես Արշակ Երկրորդի կերպարում հեղինակը հայտնակերպեց Աստվածամարդուն, ըստ էության՝ նրան հակադրեց սովորական գոյին՝ տարանջատելով արքա տեսակը՝ որպես աստվածային ստեղծագործություն՝ բարձրագույն կոչմամբ ու առաքելությամբ: Որտե՞ղ է թաքնված ճշմարտությունը, կամ հնարավո՞ր է այս առեղծվածը բացահայտել:

Ըստ շումերական էպիկական տեքստերի՝ աստվածային օրենքների՝ «մե»-ի երկիրը Արատտան էր՝ հնագույն հայկական պետությունը¹, որտեղ ապրում էին Աստվածները և նրանցից սերվածները՝ Մելիքները: Ըստ «Ենկին և աշխարհակարգը» դիցապատումի՝ «մե» կոչվող աստվածային օրենքը գտնվում էր Հայայի մոտ, նա էր տնօրինում «մե»-ի ուժը²: Տիեզերածնության մեջ Հայայի գործառույթը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ Հայան և «մե»-ն նույնական էին, քանի որ բոլոր դիցապատումներնյութական տիեզերքի Արարիչ-Աստված են համարում Հայային և նրա որդի Մարդուկին: Շումերագետները միասնականորեն «մե»

1 Տե՛ս Արտակ Մովսիսյան, Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա, ՀՀԴ հրատ., Երևան, 1992:

2 <http://khazarzar.skeptik.net/books/shumer/enki.htm>

արմատը աստվածային օրենք են թարգմանել, ուրեմն «մե»-ն ոչ միայն Բարձրյալիկարգն է, այլև նույնանում է Արարիչ միակին¹, և այս իմացության հիմքի վրա «մեյիք» բառի ստուգաբանությունը տարակարծության տեղիք չի տալիս. լի-արմատը և ք հոգևակերտը ամեն հայ դպրոցականի ծանոթ են. ուրեմն «մեյիք» նշանակում է աստվածային օրենքներով լի կամ կրող, Աստծո կարգը երկիր-Մեյիքության վրա պահպանող: Ըստ սեմիտական մեկնության՝ «մեյիք»-ը «մալեք» հնչողությամբ նշանակում է «արքա», իսկ հրեական հոգևոր գիտելիքը («Թալմուդ», «Թորա», «Կաբբալա») Կենաց ծառի տասներորդ աստիճանը, որ երկիր մոլորակն է, կոչում է Մալքութ, բառ, որը միայն հայերենով է ստուգաբանվում: Համաշխարհային բանահյուսական կամ բանահյուսական հիմք ունեցող գրական տեքստերում հաճախ հանդիպում ենք «մեյիք» բառից բաղադրված Կ.Գ.Յունգի առաջնային կարևորության արքետիպերից մեկին՝ իմաստունի, քրմի, մոգի կամ թագավորի կերպարին² (Մելիքադես, Մելքիսեդեկ), որի հրաշագործ ուժը կազմակերպում և ուղղորդում է իրականությունը, և որի անվան առաջին արմատը «մե»-ն է՝ աստվածային օրենք կամ կարգ նշանակող արմատը: Նշանակում է մեյիքը արքան է, որ իշխում է Մեյիքություն կոչվող երկրային արքայությունում, Իսկ մեյիքություն երևույթը որպես իշխանություն կամ պետական կառավարման մոդել միայն հայ ազգն ունի:

Արմեն-ը հայության ինքնանվանումներից մեկն է, բառի ստուգաբանությամբ կունենանք «ար» և «մե» արմատները: Արը հայոց հնագույն դիցարանի գերագույն աստվածն է՝ Արևի աստվածը, իսկ մե-ն նրա աստվածային կարգը, ուրեմն Ար-մե կնշանակի Արի օրենքները պահպանող մարդ կամ երկիր: Այս անունով հայկական պետության մասին պատմաբան Արտակ Մովսիսյանը գրում է. «Վաղուց նկատվել է, որ բիայնական (ուրարտական) սեպագիր աղբյուրների Արմե երկիրը նույն ասորա-բաբելական արձանագրությունների Շուբրիան է: Այսինքն՝ Վանի թագավորության ժամանակաշրջանում այս երկու անունները տրվել են նույն երկրին»³: Հետևաբար հային տրվող Արմեն անունը, որ նաև նրա երկրի անունն է, բացառապես աստվածային ծագում ունի՝ Արի օրենքների կրող, Արմե-Արմենիա՝ Արի օրենքների երկիր: Արքա բառի հիմքում Ար աստծո անունն է, եթե ք-ն համարենք հոգևակերտը, կունենանք արեր-

1 Արմեն Դավթյան, Հայերեն-շումերերեն ընդհանրությունների բառարան, Երևան, Ինդիականային հրատ., 2014, էջ 324-330:

2 Карл Густав Юнг, Сознание и бессознательное, Москва, «Академический проект», 2013, ст.124.

3 Արտակ Մովսիսյան, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, Երևան, Երևանի համ. հրատ., 2005, էջ 43:

արից սերվածներ իմաստը, որ նույնն է թե՛ Աստծո մարդ կամ Աստվածամարդ: «Կի» շումերերեն նշանակում է երկիր, Կին Նյուբա արարող, ծնող աստվածուհի է, այս բառի նախածին հայկականությունը հիմնավորման կարիք չունի, այն այսօր էլ հայերենում ամուսնացած իգական սեռի ընդհանրական իմաստ ունի՝ կին: Երկինքն ու երկիրը երկունքով էին բռնված, և Աստծո ծնունդ էր սպասվում «Վահագնի ծնունդը»: Եթե Արը երկնքի Աստվածն էր և աստվածների հայրը, ապա Կին Երկրի Աստվածուհին էր, Նյութական տիեզերքի արարիչը, որ ուներ նաև Արուրու անունը, արարիչ բառի նախասկզբնական տարբերակը, որ հենց մարդաստեղծ գործառույթ ունի՝ որպես նախամայր¹: Ար և Կի աստվածությունների անունների միասնականացման և Կ-ի շնչեղացման արդյունքում կունենանք արքի ձևը: Նկատենք, որ «երկինք» և «երկիր» բառերի հիմքում նույնպես ար-կի հնչյունափոխված արմատների առկայությունն է, որ նշանակում է ոգու և Նյութի, արական և իգական սկիզբների, վերևի և ներքևի միաձուլում, որից սերում էին Աստվածամարդիկ: Հետևաբար «արքա» բառի բոլոր ստուգաբանությունները կապվում են աստվածային սկզբի հետ, նշանակում է՝ հայոց արքան պետք է աստվածային ծագում ունենար:

Եթե մերօրյա մարդը կասկած ունի Աստվածամարդ տեսակի գոյության մասին, ապա հներն համոզված էին, որ կան աստվածային սերմից արարվածներ և պարզապես ցեխաշախաղ գոյություններ: Ո՞վ էր Գիլգամեշը, այդ մասին դյուցազնավեպում կարդում ենք. «Գիլգամեշը ստեղծված է ամբողջությամբ դյուցազնի մը կերպարանքով: Աստվածներն են ստեղծել զայն: Գիլգամեշ մեկ երրորդով մարդ և երկու երրորդով աստված է իր Էոբայմբ: Մեծ զարմանքով ու պատկառանքով կը Նային մարդիկ անոր կերպարանքին»²: Նրան ստեղծել էր Արուրուն, նույն Արուրուն դիցահայր Անուի հրամանով Գիլգամեշի համար ընկեր է ստեղծում հողի շաղախից՝ Էնկիդուին, որը մահկանացու էր և չունեի աստվածային Էոբայմբ, ինչպես Գիլգամեշը: Ուրեմն Արուրու արարչի կողմից բանական կյանք ստեղծվել է տարբեր մեթոդներով՝ աստվածային Էոբայմբից բաժին հանելով ստեղծագործությանը, որին կարելի է Աստվածամարդ կոչել, և բացառապես Նյութական ատաղձից, որն էլ երևի գոյ է կոչվել: Արդյոք այս պատմությունը բացարձակ մի՞Ք է, թե՞ ի վերջո բացահայտում է արարչագործության գաղտնագրված պատմությունը և տեսակ-

1 Торкильд Якобсен, Сокровища Тьмы, История месопотамской религии, Москва, изд. « Восточная литература», РАН, сс. 68-71.

2 Գիլգամեշ, Հին արևելքի էպոս, թարգմանությունը և առաջաբանը՝ Նշան Մարտիրոսյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963, էջ 20:

ների բազմազանության առեղծվածը: Եթե բոլոր դավանանքներն անքն-
նելիորեն հաստատում են, որ Աստված է արարել ամեն ինչ, եթե արեւիստ
չենք, ու կապիկներից սերելը վիրավորական ենք համարում, ապա կա-
րող ենք նաև ենթադրել, որ արարչագործության միջոցները միշտ նույնը
չեն եղել, որ աշխարհը բազմազան ու բազմագործառույթ տեսնելու ցան-
կությամբ այն ստեղծվել է ձկների, գույների, կողերի անսահման համա-
ծուլվածքներից, Կենսաց ծառը բաղադրող ոգու, հոգու և Նյութի տարբեր
համամասնություններից կամ երբեմն դրանցից մեկի կամ մյուսի բացա-
կայությամբ:

Պարզվում է, որ այս առեղծվածը նաև փիլիսոփաներին է մտահո-
գել: Ֆ.Նիցշեի «Այսպես խոսեց Չրադաշտը» երկի առաջին էջերում ար-
դեն հանդիպում է այսպիսի սահմանում. «Մարդը լար է՝ կապված կեն-
դանու և գերմարդու միջև, լար՝ անդունդի վրա»¹: Որքան էլ հնարավոր
բոլոր մեկնությունները հակասություն և անճշտություն կարող են պա-
րունակել, այնուամենայնիվ համարձակվենք գոնե բարձրացնել գաղ-
տիքի ծածկոցը: Կարծում ենք՝ գաղտնիքը Չրադաշտի անձի և ծագման
մեջ է: Մարտին Հայդեգերը «Ռ՞վ է Նիցշեի Չրադաշտը» խոհագրության
մեջ, անընդհատ առաջադրելով այս հարցը, ըստ էության հեռանում է
հավանական ճիշտ պատասխանի ակունքից՝ հիմնականում Չրադաշ-
տի կերպարը քննելով Նիցշեի բնութագրումներով, որոնք որոշ իմաս-
տով գաղտնագերծման կարոտ մտքեր են: Չրադաշտը խոսում է գեր-
մարդու մասին, ուսուցանում գերմարդու տեսակը՝ բացահայտորեն
ծաղրելով և նրան ստորադասելով մարդուն և մարդկանցից գոյացած
ամբոխին. «Գերմարդն է իմաստը երկրի: Ձեր կամքը թող ասի՝ եղիցի
գերմարդը՝ իմաստը երկրի»²: Իսկապես, Ռ՞վ էր Չրադաշտը: Աստվա-
ծամարդուգաղափարը փիլիսոփայություն մուտքագրելու Նպատակով
Նիցշեն ընտրեց այս պատմական անձին, որին համարում են մարգա-
րե, մոգ, քարոզիչ, «Ավեստայի» Նախնական տարբերակի հեղինակը:
Նրա ծննդյան մոտավոր ժամանակը համարվում է մ.թ.ա. 1000-1200թթ.,
ծննդավայրը՝ Ուրմիա լճի տարածքը, իսկ մի քանի արևելյան պատմիչ-
ներ նրա ծննդավայր համարում են Մեծ Հայքը: Նիցշեն երկը սկսում է
այսպես. «Երբ բոլորեց Չրադաշտի երեսուն տարին, նա թողեց իր հայ-
րենիքը և լիճը իր հայրենյաց և լեռները գնաց»³: Այսինքն՝ հայրենիքից
հեռացավ: Չրադաշտի կենսագրությունից հայտնի է, որ նրա քարոզած

1 Ֆրիդրիխ Նիցշե, Այսպես խոսեց Չրադաշտը. Գիրք ամենքի և ոչ ոքի համար, Երևան, ԻԿԿ, 2008, էջ 50:

2 Նույն տեղում, էջ 48:

3 Նույն տեղում, էջ 44:

ուսմունքը հալածվում էր, և նա ստիպված հեռանում է ծննդավայրից՝ Ուրմիա լճի տարածքում գտնվող, որը նշված ժամանակաշրջանում միանշանակ հայկական տարածք էր: Մարգարեության շնորհի երեսուն տարեկանում ստացել է Ահուրամագդայից (Արամագոն է): Նրա անվան Նախնական ձևը՝ Չարաուստրան, թարգմանվել է «փայլող աստղ» կամ «աստղի որդի», անվան մեջ անթաքույց ներկա են «ար» և «ուստր» արմատները, իսկ Չորոաստր օտար հնչողության մեջ՝ «աստղ» արմատը: Ցանկացած հնչունափոխության դեպքում ակնհայտ է, որ բարձրագույն մարդու գաղափարը զարգացնում էր նույն ինքը աստվածային ծագում ունեցողը՝ արորդին, և չերկարող Նիցշեի ընտրությունը պատահական լինել: Ընտրված պատմական անձը լավագույնս արտահայտում էր նրա գաղափարները կատարյալ մարդու մասին: Հետևաբար պատմության և գաղտնագիտության թաքստոցները պրպտող Լևոն Խեչոյանը միանգամայն հիմնավորված փորձում է ամրագրել գեղարվեստական տարածության մեջ այն միտքը, որ Արշակունի Արշակ Երկրորդ արքան, որի անվան և ազգանվան պատվանդանը «ար» արմատն է, աստվածային ծագում ունի, և ըստ էության վեպի կոնֆլիկտը կառուցված է այս իմացության պատվանդանին:

Խեչոյանը արքայատություն-եկեղեցապետություն հակադրամիասնության հիմքում տեսնում է Արշակունիների հարստության կործանմամբ ոչ միայն հայոց պետականության վերացման միտումը, այլև, որ հեղինակի համար առավել ցավալի է, արքա աստվածային տեսակի, նույնն է թե՛ Աստվածամարդուն ոչնչացնելու միտում: Վեպում Արշակի՝ արքայապետությունը ամրացնելու բոլոր գործողություններին խոչընդոտում է եկեղեցին՝ Արշակավանի կառուցումը տապալելու և այդ պատրվակով արքային ոչնչացնելու նպատակով միջոցների առջև խտրություն չդնելով: Քրիստոնյա քարոզիչները առավելագույնս նսեմացնում էին Արշակի անձն ու գործը՝ ձգտելով օտարել ու թշնամացնել ժողովրդին իր արքայից: «Ձեր թագավորը իրենից կուռք է ստեղծում, նա մեծամտանում է իր ծագման արիականությամբ և օտարության պատն է դնում իր և ժողովրդի միջև, որովհետև կարծում է, թե ինքն աստվածամարդն է՝ նմանակած մեծն Տիգրանին, Ներոնին, Ալեքսանդրին, փարավոններին, որոնք Աստծո ժամանակի մեջ փոշեհատիկ են, կան և չկան: Մենք ասում ենք՝ թող քաղաքը չկառուցվի ինքնակոչ աստվածամարդու կողմից»¹: Հետաքրքիր է «Ձեր թագավորը» բնորոշումը, որ տրվում է քրիստոնյա

1 Լևոն Խեչոյան, Արշակ արքա, Դրաստամատ Ներքինի, Երևան, «Անտարես», 2013, էջ 132-133: Այս գրքից բերված քաղվածքների էջերը կնշենք տեղում այսպիսի հապավումով՝ Ա.Ա» էջ...:

քարոզիչների կողմից, նրանք ճանաչում էին միայն իրենց հավատը ու եկեղեցին, որի բարեկեցությունը խանգարող ամեն ինչ, անգամ հայոց պետականությունը, դրվում էին զոհասեղանին: Իրենց ատելության քարոզի մեջ ակամա հաստատում են իրական տիեզերակարգի նշանները. «Արշակի մեծամտությունը և մեր դժբախտությունը սկսվեց Շահապիվանից, երբ այնտեղ նա հաղթեց ցլին, բայց այդ մենամարտը իրականում մեր աշխարհի համար ցուցադրված պայմանական նշան էր: Ցուլը բնության վայրի ուժի բացարձակ գեղեցիկն է, բանականին հաղթողը, հողագնդի շնչառության հրե խորհուրդը, ծննդի սկիզբը, ոսկրածուծի լրումն ու նվազումը: Նոխազը նրա հակոտնյան է: Արշակը բնությանը, Աստծուն հակադրեց նոխազին՝ խոհեմ գեղեցիկին, քաջին, խաղաղասերին, հոտի առաջնորդին, ինքն իր մեջ ծնած աստվածամարդուն: Իսկ դուք գիտե՞ք, թե ինչ խաղաղություն է երկրում սփռում աստվածամարդ առաջնորդը» (ԱԱ, էջ 132): Նոխազի խորհրդաբանությունը կվերլուծենք առաջիկայում, այս պարագայում շեշտադրվում է հետևյալ գաղափարը. «Այսօր նոխազը հաղթեց ցլին, եթե նշանը մեկնելու լինենք, կնշանակի, թե թագավորը աստվածամարդ է...» (ԱԱ, էջ 133): Իրականում ի՞նչ էր խորհրդանշում ցուլը, ինչո՞ւ Արշակ թագավորը այդքան կարևորեց ցլի հետ մենամարտը: Ցուլը ամենատարածված պաշտամունքային կենդանին է արևելքից արևմուտք ընկած ամենատարբեր մշակութային իրականություններում. «Երկրի պտղաբերության խորհրդանիշը: Սեռային ուժի, ինչպես նաև բռնության և կատաղի ուժի ամենատարածված խորհրդանիշը, մարմնավորված հզորություն, իշխանություն, արական պտղաբերություն: Աստվածայինի, արքայության, բնության տարերային ուժերի՝ տարբեր դարաշրջաններում և տարբեր մշակույթներում իր նշանակությունը փոփոխող բազմիմաստ խորհրդանիշն է»¹: Նյութական աշխարհի անկառավարելի, կատաղի, բուռն տարերքի նշանն է: Լուսնի Ան աստծո սուրբ կենդանին է ցուլը, իսկ Լուսինը իգական, մայրական սկզբունքի կրողն է: «Գիլգամեշ» դյուցազնավեպում Ինաննա-Իշտար աստվածուհին իր կրթոտ սերն է առաջարկում Գիլգամեշին, մերժվելուց հետո դիցահայր Անուին ստիպում է պատժել նրան երկնային ցուլին ուղարկելով կռվի: Գիլգամեշը սպանում է ցուլին՝ այդպիսով չենթարկվելով կին աստվածուհու ցանկությանը, պաշտպանելով իր առնական կամքը²: Արշակը պետք է ամուսնանար թագաժառանգի կնոջ՝ Փառանձեմի հետ, որը ոչ մի կերպ չէր ընդունում արքային որպես այդ ու ամուսին: Արշակը

1 Энциклопедия символов, Москва, Санкт-Петербург, изд. "Сова", 2005, с.848.

2 Տե՛ս Հին Արևելքի պոեզիա, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1982, էջ 129-132:

պետք է նվաճեր նրա կանացի եղբայրներն ու մարմինը, ցույց խորհրդանշում է այդ երկրային, իգական սկիզբը. «Առասպելաբանության մեջ ցույց խորհրդանշում է պտղաբերություն, սերմնավորում արական սկիզբի ներթափանցումը իգական սկիզբ»¹: Հիշենք, որ Անահիտ դիցուհուն անվանում էին ցլապահ, նրա պաշտամունքի վայրերում աստվածուհու դրոշմակնիքներով նախիրներ էին պահում որպես արգասաբերության խորհրդանիշ²: Այս դեպքում դա արական պտղավորող ուժի, խեղդանի բառերով՝ «որդեսերման սերմի» իրավունքի հաստատումն է իգական անկառավարելի կենսաուժի հանդեպ, արքայական տունը արգասավորելու կամք ու գործություն: Մենամարտին ներկա Տիրան թագավորահայրը նրա նպատակային հաղթանակի հիմքում դնում է ապագա թագաժառանգի ծնունդը, որը մեկնաբանում է այսպես. «Որովհետև նա գիտի, որ երկրին թագաժառանգ է պետք, կարհամարհի անձնական երջանկությունը» (ԱՎ. Էջ104): Ցիլ ընթացքը ուղղորդելու նպատակով Արշակը խոյի արյուն է քսում սրտին՝ արյան կարմիրով գործողության մեջ դնելով նրան: Կենաց ծառի ամեն ոլորտ իր գույնն ունի, տասներորդ՝ նյութական աշխարհի գույնը կարմիրն է, դա նաև նյարդահյուսքերից (չակրա) առաջինի՝ սեռային էներգիան խորհրդանշող գույնն է: Հնդկական հարսանեկան ծեսին հարսնացուն կարմիր է հագնում, արյան կարմիրով է նշանավորվում նյութական տիեզերքի իգական և արական էներգիաների ներթափանցումը, որ խթանում է ես-ի շարժիչը՝ օձահուլը (կունդալինի) դնելով պտույտի մեջ: Իսպանացիները ցլամարտի ժամանակ օգտագործում են կարմիր կտոր՝ ցուլին գրգռելու նպատակով: Ցույց սեռային ուժի նշանն է, որին գործողության մեջ է դնում կարմիրը: Կարմիրի խեղդանական բնութագիրն իսկապես կատարյալ է ու իմաստավոր. «Կարմիրը՝ գույներից ամենապայծառը, հերթականության մեջ ամենավերջինն է: Բովանդակությամբ՝ ամենաթույլը, հանգչողը, որն իր ավարտի մեջ սև է դառնում: Նրանով վերջանում է աշխարհը, կյանքը նրա մեջ ավանդում է շունչը: Ցույց՝ Աստծո փոխանորդը երկրի վրա և երևելին իր իմացությամբ, նրան հանդիպելիս նետվում է մարտի: Կենդանական աշխարհը այդ գույնով տեսնում է արյան սպանվելն ու սարսափում նրանից: Կարմիրը կենաց և մահու աշխարհների վերջին սահմանագիծն է...» (ԱՎ, Էջ 6-7):

Ցիլն հաղթելուց հետո միայն Արշակին հաջողվում է տիրանալ Փանանձեմին: Բնությունը ցնծում է սիրո, պտղավորման այդ ծեսից, հեղի-

1 Энциклопедия символов, Москва, Санкт-Петербург, изд. "Сова", 2005, с.849.

2 Տե՛ս Կ.Վ.Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, Հայկ.ՍՍՌ ԳԱ իրատ., 1963, 163 էջ:

Նաև գեղագետի բացառիկ տաղանդով պատկերագրում է մարմնի և հոգու մերձեցման տիեզերական հրաշքը, որից Նոր Աստվածամարդն էր արարվում. «Ամբողջ մի շաբաթ անձրև էր գալիս, իսկ տարին երաշտով էր սկսվել, եթե Արշակ արքան և Փառանձեմ թագուհին տարվա այդ եղանակին լեռները չբարձրանային, Հայոց աշխարհում սով կլիներ, ու չէր ծնվի Պապ թագավորը: Գետնի տակ սգում էր դժոխքը, իսկ վերևում ցնծում էր երկինքը» (ԱԱ, էջ 107):

Վերադառնալով Նոխազի խորհրդաբանությանը, խնդրանական գեղագիտությունը կատարյալ սահմանում է տվել Նոխազի աստվածային գործառույթին՝ շաղկապելով այն աստվածամարդու ծննդաբանությանը. «Նոխազը Նրա հակոտնյան է: Արշակը բնությանը, Աստծուն հակադրեց Նոխազին՝ խոհեմ գեղեցիկին, քաջին, խաղաղասերին, հոտի առաջնորդին, ինքն իր մեջ ծնած աստվածամարդուն: Իսկ դուք գիտե՞ք, թե ինչ խաղաղություն է երկրում սփռում աստվածամարդ առաջնորդը» (ԱԱ, էջ 132): Ո՞րն է Նոխազ-աստվածամարդ կապի առեղծվածը, որտեղ փնտրել գաղտնագիտական այս սահմանումի բանալին: Հնագույն դիցաբանական տեքստերը, մասնավորապես շումերա-աքքադական դիցապատումները ահռելի յուրօրեն պարունակում Միջագետքի գերագույն աստվածներից մեկի՝ Էնկիի-Հայայի աստվածային գործառույթների, պաշտամունքի, ընտանիքի, խորհրդանշանների մասին: Աքքադական Հայան և շումերական Էնկին Արատտայի հայկական քրմապետության հովանավոր աստվածն է, Արատտայից հեռանալով՝ շումերներն իրենց հետ տարան Էնկի-Հայայի պաշտամունքը և Նրա պատվին կառուցեցին Երիդու քաղաքը՝ որպես երկրի տիրակալին Նվիրված պաշտամունքի կենտրոն, իսկ Շումերը տեղացիները Նրա անունով կոչել են Կի-Էնկի՝ Էնկիի երկիր¹: Էնկի-Հայան ունի իր կենդանական խորհրդանշանը. քանի որ Հայան քաղցրահամ ջրերի Աստվածն էր, Նրա խորհրդանշաններից առաջինը ծուկն է, իսկ Նրան տրվող մյուս անունը՝ «Աբգուի լեռնային այծ», շեշտադրում է Նրա կապը այծ-Նոխազի հետ, որով այնքան հարուստ է Հայկական լեռնաշխարհը: Ուրեմն Հայա Աստծո արական սկիզբը մարմնավորվում էր բեզուարյան այծի կերպարով, որը պատկերներում Կենաց ծառի պահապան ոգին է, այսինքն՝ Արեգակնային համակարգի արարիչ կենսաուժը: Ահա թե ինչու էր Էնկի-Հայան պատկերվում կիսաայծ-կիսաձկան տեսքով, որը այծեղջյուր համաստեղության խորհրդանշան է: Մշակութաբան և սեպագրագետ Համետ Մարտիրոսյանը, քննելով Վահագն Աստծո Վիշապաքաղ մակդիրը, սեպագրագիտական

1 Торкильд Якобсен, Сокровища Тьмы, История месопотамской религии, Москва, изд. «Восточная литература», РАН, сс. 71-76.

և նախալեզվի ստուգաբանական վերլուծության շնորհիվ եզրակացնում է. «Այծեղջյուրի (այծ-ծուկ) պատկերը ծագել է վերին հին քարի դարի Հայաստանում և հետո այստեղից տարածվել է աշխարհով մեկ: Եղջյուրի պատկերից ծագած շումերական սեպանշանը «եղջյուր» իմաստից գատունեցել է նաև «ջուր լցնել, ջուր հեղել» իմաստը: Այս գաղափարագրությունը հիմնված է հենց «եղջյուր» բառի և «հեղ-ջուր» արտահայտության համանունության վրա: Համանունների այս զույգը պատկանում է մի-միայն հայերենին, հետևաբար այծածկան Այծեղջյուր անվանումը տառացի նշանակել է «ջուր հեղող այծ, ջուր բխեցնող այծ»: Այլ կերպ ասած, այծածկան պատկերի «վիշապաքաղ» և «այծեղջյուր» անվանումները կրում են նույն իմաստը և նրանցում նույնական են այծ և վիշապ=եղջյուր=«ջուր հեղող, ջուր բխեցնող» բաղադրիչները»¹: Մշակութաբանն իր առջև խնդիր է դրել՝ պարզելու հայոց նախնի Աստծո ինքնությունը, և լրջագույն գիտական պրպտումների արդյունքում բացահայտում է, որ Վահագնը Հայա Աստծո անուններից մեկն է, քանզի Վիշապաքաղ մականորդը, որ նշանակում է «ջուր բխեցնող այծ» նույնանում է այծեղջյուրի խորհրդապատկերին՝ ներկայացնելով հայոց նախնի Աստված Հայային, որ հայության ինքնանվանումներից մեկն է: Հիմք ընդունելով Համլետ Մարտիրոսյանի կարևորագույն բացահայտումը Հայ(ա) Աստծո, Նրա Մարդուկ-Արմենակ որդու հովվական գործառույթի մասին՝ հիշենք պարսից ախոռապետի Արշակ Երկրորդին դիմելու ձևը, և կունենանք Հայայի կենդանական այծ-նոխազ խորհրդապատկերի առնչությունը «այծ հայերի արքա» բառակապակցությանը, արերի ծագումնաբանական կապը նոխազի խորհրդաբանությանը այսպիսի մեկնություն է ստանում Խեչոյանի կողմից. «Իմացե՛ք՝ նոխազը հին աշխարհի նշանների մեջ արիական ծագման խորհրդանիշն է, աստվածամարդու հաստատումը երկրի վրա» (Ա.Ա., էջ 132): Այսպիսով՝ ամրագրվում է Արշակունի արքաների ծննդաբանության աստվածային ակունքը, իսկ Ար-Արմենակի ազն-ից սերելը վերջնական վավերացումն է աստվածամարդ ֆենոմենի գոյության. «Շումերական աստվածացուցակներից մեկում այս (Հայա՝ Ս.Ա.) Աստծո թվարկվող անունների մեջ գրանցված է նաև հետևյալ՝ EN.TUR=^dE₂.A=sa₁₅SIPADUZ₃ դիցանունը: Գրությունից բխում է, որ ձախ կողմում ^dE₂.A=Հայ Աստծո անուններից մեկն է, իսկ աջ կողմում՝ Նրա ինչ-որ բնութագիր: sa₁₅SIPADUZ₃- այստեղ sa₁₅= սա ցուցական դերանուն

1 https://www.academia.edu/41420558/%D5%80%D4%B1%D5%85%D5%88%D5%91_%D5%86%D4%B1%D4%BD%D5%86%D4%BB_%D4%B1%D5%8D%D5%8F%D5%8E%D4%B1%D4%BE%D4%B8?fbclid=IwAR3zbYb3cotO_40heBct9OSJqiemP_Z09RtxfWB1tXVgeoYZdBb2QFQYQx8

Է: Հաջորդ SIPAD բառն ունի «հովիվ» իմաստ և ներկայացնում է հայերեն «հովիվ, հովվապետ» բառը: Իսկ $UZ_3 = \langle \text{այծ} \rangle$ բառն էլ ունի հայերեն «այծ, Էծ, ած, ազ» անվանումները: Հնագույն ժամանակներից ի վեր «հովիվ» նշանակող բառերը գործածվել են «պահապան, աշխարհիկ և հոգևոր առաջնորդ» իմաստով և գործածվել են որպես աստվածների և արքաների տիտղոս»¹: Ուրեմն Արշակի հաղթանակը ցույի հանդեպ խորհրդանշում էր արիների հաղթանակը լուսնապաշտների, այսինքն՝ տիեզերքի իգական կենսաուժի հանդեպ, աստվածամարդու հաղթանակը ինքնահռչակ աստվածորդու հանդեպ: Քրիստոնեական եկեղեցին հնարավոր բոլոր միջոցներով վարկաբեկում և թուլացնում էր Արշակունիների իշխանությունը: Գնելի սպանությունը, Արշակավանի կառուցումը, Ներսես Մեծի մահվան առեղծվածը օգտագործվում էին արքայի դեմ որպես անհուսալի ոճրագործի, անդամնալի մեղավորի կերպարի ձևավորման գեներ, միևնույն ժամանակ իր աշխարհայացքի և գեղագիտության համակարգային զինանոցը ներդնում է՝ Արշակ արքայի կերպարն ու տեսակը փրկելու կղերականներից, որոնք մերժում էին աստվածայինի որևէ այլ դրսևորում, բացի քրիստոնեականից: «Ժողովուրդն աղաղակեց. «Հնարավոր չէ, Աստված մեկն է ու երկնքում է ապրում»: Շաղիտան, Եպիփանը և Գինդը, որ Սկունյաց ցեղից էին, ասացին. «Ճիշտ է» (Ա Ա., էջ 105):

Շումերական հնագույն տեքստերը վկայում են, որ արքաները երկնային ծագում ունեն և աստվածների կամքով են երկիր իջել:

Այն բանից հետո, երբ արքաներն իջան երկնքից,

Երիզուն դարձավ թագավորանիստ:

Կամ՝

Երբ արքայական իշխանությունները իջան երկնքից,

Երբ բարձրադիր խույրը և

Արքայական գահը իջան երկնքից,

Նա ստեղծեց ծեսը և բարձրագույն աստվածային օրենքները²:

Նշանակում է՝ արքայապետությունը՝ որպես երկրային կառավարման մոդել ունի աստվածային ծագում, և դա է իշխանության բարձրագույն ձևը՝ երկնային արքայության նմանակը և տիեզերական ոգու փոխանորդը երկիր-մեղիքության վրա: Ահա թե ինչու այս ճշմարտությանը տեղյակ երկրները պահպանել են թագավորական տները՝ թեկուզ որպես պետա-

1 https://www.academia.edu/41420558/%D5%80%D4%B1%D5%85%D5%88%D5%91_%D5%86%D4%B1%D4%BD%D5%86%D4%BB_%D4%B1%D5%8D%D5%8F%D5%8E%D4%B1%D4%BE%D4%B8?fbclid=IwAR3zbYb3cotO_40heBct9OSJqiemP_ZO9RtxfWB1tXVgeoYZdBb2QFQYQx8

2 Поэзия и проза Древнего Востока, Москва, изд. «Худ. лит.», с. 133.

կանության խորհրդանիշ և ոչ ակտիվ գործադիր կառույց: Կդերականները ոչնչացնում էին հայոց արքայապետությունը եկեղեցապետություն ստեղծելու համար, պարսից արքունիքը կործանում էր այն՝ թուլացնելու և գրավելու համար հայոց աշխարհը: Այս երկու գործող ուժերի դեմ պայքարում սասանվում էր հայոց թագավորի գահը: Ինչպես տեսանք դիցապատումից քաղված հատվածում, արքան ուներ իր աստվածային կարգավիճակը հաստատող առարկայական խորհրդանիշներ՝ խույրը, գավազանը, գահը: Ի սկզբանե՝ դրանք Էնկի-Հայայի աստվածային ինքնությունը հաստատող խորհրդանիշներ էին, որ նա փոխանցեց իր որդի Մարդուկ-Արմենակին, և, ըստ «Էնումա Էլիշ» (Այստեղ վերևում) դիցապատումի, տվեց երկրային իշխանության գահը և արքայական խույրը:

Երբ աստվածները՝ Նրա հայրերը, տեսան Նրա խուցի պտուղը,

Նրանք ուրախությամբ Նրան խոնարհվեցին: «Մարդուկն արքա է»:

Նրանք հանձնեցին Նրան ծիրանին, գահը և խույրը¹:

Հնագույն դիցաբանական տեքստերը վկայում են, որ առաջին երկրային արքան Մարդուկն էր, անուն, որ միայն հայերենում է նշանակում բանական էակ, Նրան տրված հիսուն անուններից մեկն էլ Արմենակն է, որն արդեն ստուգաբանել ենք, ուրեմն հայ ազգի ինքնանվանումը ծագում է Հայա Աստծո անունից, որն իր որդուն՝ աստվածային «մե» օրենքները կրող Ար-ին տալիս է երկրային արքայության իրավունքը՝ Նրան դարձնելով հայության մյուս ինքնանվանման՝ Արմենի կրողը, իսկ Նրանից սերվածներն կամ արարվածները արերն էին կամ արք՝ Նույնն է թե՛ Աստվածամարդիկ:

Արքայի աստվածային ծագման նշաններից էր Հարալեզ շունը, որ Արշակ երկրորդին նվիրում է հովիվը՝ վստահեցնելով, որ Հարալեզ շունը բացառապես երկնային ծագում ունի և միայն արքային կարող է ծառայել: «Մի անգամ սրա մայրը նստել էր անհաս, բարձր քերծին, որտեղ միշտ կապույտ մուգ էր, ու անընդհատ ձայներ էին լսվում: Շան նստած տեղը հենց Նոր, ժամանակավորապես հարալեզ դարձած ինչ-որ մի հեթանոս Աստված թողել էր իր սերմը, և այդ պատահականությունից հղիացել էր մեր Էզը ու ծնել մի քոթոթ՝ միայն սրան» (Ա.Ա., էջ 166): Արայի առասպելից հայտնի լիզելով մեռյալին հարություն տվող այս առասպելական կենդանիներն արդյոք միայն հորինվածքի տիրույթում են գոյո՞ւմ, թե՞ Նրանց ծագումնաբանությունն ուրիշ առեղծված կամ բնութենական բացատրություն ունի: Մշակութաբան Արթուր Արմինը մանրամասն ներկայացնում է Հարալեզ առասպալաբանական երևույթի տիեզերական ակուն-

1 <https://knigogid.ru/books/768310-enuma-elish/toread/page-4>

քը, ըստ որի՝ այն համաստեղություն է, որ ձմեռային արևադարձի օրերին Արևի բարձրանալու և Երկրի տատանման (պրեցեսիայի) հետ կապված ստեղծում է Արևին «լիզելու» երևույթականություն, ինչը դիցապատումներում ստացել է առասպելական շան կերպար, որն Արային՝ այսինքն՝ Արևի Աստծո վերքերը լիզելով՝ «կենդանացնում է» նրան¹: Հովիվը շեշտում է, որ այդ լեռներում աստվածներն են ապրում, նրանցից է սերել այդ շունը, և նա կապաշտպանի արքային: Հարալեզ շան՝ արքայի զորության և կենսականության երաշխիքը լինելու մասին գիտելի շատերը, Արշակի դեմ ապստամբած արքայազն Տիրիթը, տեսնելով Արշակի կողմից ծառից կախ տված հարալեզ շանը, դադարեցնում է ապստամբությունը՝ հասկանալով, որ դա մահվան նշան է, արքան դրանով ակնարկում է, որ լուծումը միայն կործանումը կարող է լինել:

Վեպի սկզբում Դրաստամատին արքային ընծայաբերելու ծեսից մինչև Անհուշ բերդում Նույն Դրաստամատի ծեռամբ նրա վախճանը հեղինակը ձևավորում է կայուն գաղափարական առանցք, ըստ որի՝ պետականության ամրության գրավականը թագավորի անձն է, Արշակունի գրեթե բոլոր թագավորները թիրախավորված էին օտար՝ բյուզանդական և պարսկական, և յուրային՝ եկեղեցական իշխանություններից, պայքարը թեժ էր, միջոցների առջև խտրություն չէր դրվում, շատ շուտով Արշակը բանտված է լինելու, Պապը՝ դաժանաբար սպանված, և ժողովրդին հուզելու է հարցերի հարցը՝ «Ո՞ր է թագավորը», հարցադրումն ինչում է այն ժողովրդի կողմից, որը գիտեր իր արքայի աստվածային ծագման գաղտնիքը և պաշտպանված էր նրա անձով, ինչպես Աստծով, և նա նորից ուզում էր հպարտորեն գոչել՝ իսկ մենք թագավոր ունենք:

Ամփոփելով՝ եզրակացնենք, որ «արքա» և «մելիք» բառերը հոմանիշներ են և նշանակում են Ար Աստծուց սերվածներ կամ Երկիր-Մելիքության վրա աստվածային «մե» օրենքները պահպանողներ: Լևոն Խեչոյանը իր «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» վեպում գաղափարական կարևոր հիմնախնդիր է համարում Արշակ երկրորդի աստվածամարդ լինելը հիմնավորելը: Այդ նպատակով նա օգտագործում է արիական խորհրդանիշ նոխագի կերպարը, Արշակը մենամարտում է ցլի հետ և հաղթում նրան որպես նոխագ, ինչը, ըստ հնագույն շումերա-աքքադական դիցաբանության և սեպագրերի խորհրդանշում է Հայա Աստծո սուրբ կենդանու՝ այծի հաղթանակը Լուսնի Ան Աստծո սուրբ կենդանու ցուլի հանդեպ, և դառնում է Արշակ արքայի աստվածային ծագման վկայականը:

1 <http://argisdi.am/publ/9-1-0-330>

Սաթենիկ Հ. Ավետիսյան - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող: Ունի տպագրված մենագրություն՝ «Գիր և ինքնություն» խորագրով, երեք տասնյակից ավելի հոդվածներ: Չբաղվում է հայ նորագույն գրականության պատմության և տեսության հարցերով: Հետաքրքրությունների շրջանակը՝ հայ և համաշխարհային գրականության պատմություն, գրականության տեսություն, գրաքննադատություն:

AVETISYAN SATENIK- SIGNS OF THE IDENTITY OF A KING OR A MAN OF GOD IN LEVON KHECHOYAN'S NOVEL «ARSHAK KING, DRASTAMAT EUNUCH»

- The words «king» and «melik» are synonyms, meaning those descended from the God Ar or those who keep the divine laws «me» on Earth (Melikutyun). In his novel «Arshak king, Drastamat eunuch», Levon Khechoyan considers the substantiation of Arshak II to be a godman to be an ideologically important issue. For this purpose he uses the image of the Aryan symbol goat, Arshak fights with the bull, defeats him as a goat, which, according to the ancient Sumerian-Akkadian mythology, symbolizes the victory of the sacred animal of the armenian God Ha: a, the goat over the bull, the sacred animal of the God of Moon An and becomes evidence of the divine origin of King Arshak.

Keywords: god-man, king, melik, kingdom, world order, divine law, mythology, epic, goat, symbolism.

АВETИСЯН САТЕНИК-ПРИЗНАКИ ЛИЧНОСТИ ЦАРЯ ИЛИ ЧЕЛОВЕКА БОЖЬЕГО В РОМАНЕ ЛЕВОНА ХЕЧОЯНА «ЦАРЬ АРШАК, ЕВНУХ ДРАСТАМАТ»

- Слова «царь» и «мелик» являются синонимами, означающими потомков Бога Ар или тех, кто соблюдает божественные законы, «ме» на Земле (Меликутун). В романе «Царь Аршак, евнух Драстамат» Левон Хечоян считает идеологически важным вопросом обоснование того, что Аршак II является божьим человеком. Для этого он использует образ арийского символа козла, Аршак сражается с быком, побеждает его как козел, что, согласно древней шумеро-аккадской мифологии и клинописи, символизирует победу священного животного армянского бога Эя, козла над быком, священным животным бога Луны Ан, и становится свидетельством божественного происхождения царя Аршака.

Ключевые слова: богочеловек, царь, мелик, царство, мировой порядок, божественный закон, мифология, эпос, козел, символика.

REFERENCES

1. Movsisyan Artak, Hnaguyn petutyuny Hayastanum`Aratta, HHDhrat., Yerevan, 1992:
2. <http://khazarzar.skeptik.net/books/shumer/enki.htm>
3. Davtyan Armen, Hayeren-shumereren yndhanrutyunneribararan, Yerevan, hexinakayinh rat., 2014, ej 324-330:
4. Yung K.G., Soznaniye i bezsoznatelnoye, Moskva, «Akademicheskiiy proekt», 2013, st.124.
5. Movsisyan Artak, Hayastany Qristosic araj errord hazaramyakum, Yerevan, Yerevaniham. hrat., 2005, ej 43:
6. Yakobsen T., Sokrovishcha Tmi, Istoriya mesopotamskoy religii, Moskva, izd. «Vostochnaya literatura», RAN, ss. 68-71.
7. Gilgamesh, Hin Arevelqi epos, targmanutyuny ev arajabany`Nshan Martirosyani, Yerevan, HSSR GAhrat., 1963, ej 20:
8. Nishce F., Ayspes khosec zradashty. Girq amenqi ev voch voqi hamar, Yerevan, IIK, 2008, ej 50:
9. Khechoyan L., Arshak arqa, Drastamatnerqini, Yerevan, «Antares», 2013, ej 132-133: Ays grqic bervac qaxvacqneri ejery knshenq texum ayspisi hapavumov ` A.A» ej....:
10. Enciklopedia simvolov, Moskva, Sankt-Peterburg, izd. "Sova", 2005, s.848.
11. Hin Arevelqi poezia, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 1982, ej 129-132:
12. Enciklopedia simvolov, Moskva, Sankt-Peterburg, izd. "Sova", 2005, s.849.
13. Tes K.V. Melik-Pashayan, Anahit dicuhu pashtamunqy, Yerevan, Hayk.SSRGA hrat., 1963, 163 ej
14. Yakobsen T, Sokrovishcha Tmi, Istoriya mesopotamskoy religii, Moskva, izd. «Vostochnaya literatura», RAN, ss.71-76.
15. https://www.academia.edu/41420558/%D5%80%D4%B1%D5%85%D5%88%D5%91_%D5%86%D4%B1%D4%BD%D5%86%D4%BB_%D4%B1%D5%8D%D5%8F%D5%8E%D4%B1%D4%BE%D4%B8?fbclid=IwAR3zbYb3cotO_40heBct9OSJqiemP_Z09RtxfWB1tXVgeoYZdBb2QFQYQx815. https://www.academia.edu/41420558/%D5%80%D4%B1%D5%85%D5%88%D5%91_%D5%86%D4%B1%D4%BD%D5%86%D4%BB_%D4%B1%D5%8D%D5%8F%D5%8E%D4%B1%D4%BE%D4%B8?fbclid=IwAR3zbYb3cotO_40heBct9OSJqiemP_Z09RtxfWB1tXVgeoYZdBb2QFQYQx815
16. Poeziya i proza DrevnevoVostoka, Moskva, izd»Khud. lit.», ej. 133. <https://knigogid.ru/books/768310-enuma-elish/toread/page-4> <http://argisdi.am/publ/9-1-0-330>